ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«02» 02 2022 թ.
№ ՊՆ 8/2-149

«ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08422096) տնօրեն
Ի. Ավագյանին
հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Գ. Միքայելյան փ. 69
էլ. հասցե՝ QNARSHIN@MAIL.RU
հեռ.՝ 077 45 55 24

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 07.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/9-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, պետք է մատակարարեր 150 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ), որից 65 հատը չի մատակարվել, իսկ 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.10.2021թ., պետք է մատակարարեր 180 հատ փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ), որից ոչ մի հատ չի մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. փետրվարի 02-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 178 238 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 57 750 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 1 155 000 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 1 732 500 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am